ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(XIII դարի 40-ական թվականներ)*

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կիլիկիայի Հայկական թագավորությունը (1198–1375) ռազմաքաղաքական, տնտեսական ու դիվանագիտական ասպարեզներում իր ներքին կյանքը և արտաքին հարաբերությունները կառուցելիս շարունակում էր Հայոց քաղաքակրթական արժեհամակարգը համալրել հիմնարար արժեքներով՝ պետական շինարարության, մշակութային և միջազգային հարաբերությունների ոլորտներում: Հայկական պետության արտաքին քաղաքականությունը՝ աշխարհաքաղաքական փոփոխվող իրավիճակներում հաճախ ընթանում էր արևմտյան ու արևելյան ուժերի ծավալապաշտական քաղաքականության և հակամարտության պայմաններում:

Հավատարիմ դեռևս իշխանապետության ժամանակաշրջանում կիրառված բազմակողմանի արտաքին քաղաքականությանը[1]*, Կիլիկիայի Հայկական թագավորությունը XIII դարի 40-ական թվականներից գործ ունեցավ մոնղոլների հետ: Արտաքին հարաբերություններում այդպիսի շրջադարձի սկզբնական փուլում միջնորդական առաքելություն է իրականացրել հինավուրց Հայկազուն-Սիսակյանների տոհմից ծագող Առանշահիկ-Վախտանգյանների ճյուղից սերող Արցախ-Խաչենի իշխան Հասան-Ջալալ Դոլան: Պատմագիտության մեջ այս դրվագը տարբեր չափով է լուսաբանվել, իսկ երբեմն էլ բացակայում է: Այնինչ դա կարևոր է Հայոց ամբողջական պատմության համակողմանի ուսումնասիրության տեսանկյունից:*

Մեծ Հայքի Արցախ աշխարհում դեռևս X դարից բարձրացած Խաչենի իշխանությունը[2] *Հայոց պետական կարևորագույն միավորներից էր*[3]*: Հատկանշական է, որ Զաքարյանների ռազմաքաղաքական ակտիվացման ժամանակաշրջանում Մխիթար Գոշը*

---

[1] Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 139–160.

[2] Ἀρμενία· εἰς τὸν ἄρχοντα τοῦ Χατζιένης (Constantinus Porphyrogenitus, De cerimoniis aulae Byzantinae, II, 48 – Corpus Scriptorum historiae Byzantinae, editio emendatior et copisior, consilio B. G. Niebuhrii, vol. I, Bonnae, 1829, p. 687, *Բյուզանդական աղբյուրներ Բ. Կոստանդին Ծիրանածին. թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151):*

[3] *Բ. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 50:*

(1130, Գանձակ– 1213), ստեղծելով իր «Դատաստանագիրք Հայոց» կոթողային աշխատությունը, նշել է. «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականութեանն Հայոց ՈԼԳ... յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ, ի վաղնջուց ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ՝ որդւոյ Վախտանկայ կրաւնաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանկայ[4], ի դղեկին, որ անուեալ կոչի Հաթերք, գլխաւորի այլոց իշխանացն, եւ կողմանցն Կիւղիկեայ՝ մեծի իշխանին Ռուբէնի»[5]: Ի դեպ՝ Կիլիկիայում մեկ դար առաջ հաստատված Հեթումյանների ճյուղի հիմնադիր Օշինը Արցախի հարևան Ուտիք նահանգում գտնվող իր հայրենի կալվածքից[6] էր եկել:

Կիլիկիայի Հայկական իշխանապետությունը (1080–1197) 1198 թ. հռչակվեց թագավորություն, իսկ Ներքին Խաչենում 1214 թ. իշխանության գլուխ անցած իշխան Վախտանգի ու Խորիշահ Զաքարյան իշխանուհու զավակը՝ իշխան Հասան-Ջալալ Դոլան[7], XIII դ. առաջին կեսին հայտնի դարձավ որպես «... բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի թագաւոր եւ ի յոգնասահման նահանգի»[8]:

---

[4] *Հետևելով Վ. Բաստամյանցին, Մ. Բարխուդարյանին և Հ. Ամառյանին՝ Խ. Թորոսյանը կարծիք է հայտնել, որ «Դատաստանագրքի» Հիշատակարանում նշված Վախտանգը՝ Մխիթարի հովանավորներից մեկը ու բարեկամը, Վերին Խաչենի տեր, Արզուխաթունի ամուսին... Վախտանգն է և ոչ թե Զալալյանների տոհմի հիմնադիր Հասան-Ջալալի հայր, Խորիշահի ամուսին, Զաքարեի և Իվանեի փեսա Վախտանգ Տանգիկը (Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 549, հմմտ. Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 190):*

[5] *Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց: Նախաբրութիւն, ԺԱ, Յիշատակարան սակաւուք, էջ 25, Գարեգին Ա Կաթողիկոս. Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 505:*

[6] *«Մայրեաց ջուրք հանդէպ Գանձակայ» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 195):*

[7] *Սարգիս Զաքարյանի դուստր Խորիշահը (Զաքարեի ու Իվանեի քույրը) ամուսնացել էր Վախտանգ Մեծի (1120–1150) թոռան՝ Խաչենի տեր Վախտանգ-Տանգիկի (արձանագրությունում՝ Վախտանգ, 1181–1214) հետ, որի հայրն էր Հասան Մեծը (1150–1181): Վախտանգ-Տանգիկի և Խորիշահի որդիներն էին Հասան-Ջալալ Դոլան, Զաքարեն («որ և Նասրադօլա»), Իվանեն (Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 268, Վարդան Վարդապետ. Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 140) և երեք դուստրերը (տե՛ս Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 174–176): Հասան-Ջալալ Դոլայի անունով՝ Արցախի իշխանների շառավիղները հետագա դարերում կոչվեցին Հասան-Ջալալյաններ (Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 137, Է. Լ. Դանիէլեան. Գանձասարի պատմութիւն, Երեւան, 2005, էջ 87–107):*

[8] И. А. Орбели. hАсан-Джалал, князь Хаченский.— Известия Императорской академии наук, серия VI, т. III. СПб., 1909, с. 430; И. А. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 158.

Թաթար-մոնղոլների սկզբնական ներխուժումների և ասպատակությունների շրջանում[9] Խաչենի իշխանությանը վերապահված էր Կիլիկիայի Հայկական թագավորության արևելյան քաղաքականության մեջ որոշակի դեր խաղալ:

XIII դարի 30-ական թվականներից Հայոց Արևելից կողմերը՝ Արցախը և Ուտիքը, ինչպես նաև Սյունիքը, ի թիվս այլ երկրամասերի, իրենց վրա կրեցին Հայաստան ներխուժող թաթար-մոնղոլների հարձակումների հարվածները: Թաթար-մոնղոլները, Վերին Խաչենում գրավելով ու թալանի ենթարկելով Հավքախաղաց բերդը, «չոգան եւ ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն կոչէին...»: Թշնամին ուժեղ դիմադրության հանդիպեց հատկապես Ներքին Խաչենի Մեծ Առանք գավառում: VIII դարում Արցախ ներխուժած օտար զավթիչների դեմ՝ Մյուս Հաբանդ (Դիզակ) գավառի Գտիչ (Քթիշ) ամրոցի տեր Եսայի Աբու Մուսեի մղած պայքարի հարուստ փորձը[10] շարունակելով, 1236 թ. Հասան Ջալալը համառ դիմադրություն ցույց տվեց թշնամուն, ինչը վերջինիս ստիպել էր բանակցել նրա հետ: Կիրակոս Գանձակեցին (1202–1271) նշել է. «Այս իմաստուն իշխանս՝ իբրեւ ետես զյարձակումն անօրինացն, ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ... Եւ իբրև եկին պաշարեալ զնա, տեսին, զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս»[11]:

Մոնղոլներն ասպատակելով Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները՝ Գուգարքում գրավում են Լոռեն, Դմանիսը և Շամշուլդեն, այնուհետև գնալով Կուրի հովիտը՝ մտնում Վիրք և կոտորածի ու ավարառության ենթարկում Տփղիսը: Այնտեղից կրկին ներխուժելով Մեծ Հայք՝ մոնղոլները պաշարողական մեքենաներով քանդում են Անիի պարիսպները, բնակիչների մեծ մասին սրի քաշում և գերեվարում[12], այնուհետև գրավելով Կարս քաղաք-ամրոցը, Սուրբ Մարի քաղաքը[13], իսկ 1242 թ. Կարինը՝ նույնպես ավերածությունների, թալանի ու կոտորածի են ենթարկել[14]:

Ուրեմն, Ներքին Խաչենի իշխանի ցուցաբերած դիմադրությունը ստիպել էր մոնղոլներին բանակցություններ սկսել նրա հետ: Նա «իմաստաբար հաճեաց զմիտս նոցա: Յետոյ չոգաւ և ինքն առ նոսա բազում ընծայիւք»: Մոնղոլները Հասան-Ջալալ Դոլային

---

[9] *Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. III, Երևան, 1976, էջ 600–610:*

[10] *Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1877, էջ 177–180:*

[11] *Կիրակոս Գանձակեցի, էջ 267–269:*

[12] *Նույն տեղում, էջ 253–259:*

[13] *Նույն տեղում, էջ 260: Սուրմառի բերդաքաղաքը (այժմ աղավաղված ձևով՝ «Սուրմալի» կամ «Սուրմալու») առաջին անգամ հիշատակում է Արիստակես Լաստիվերցին (XI դ.) (տես՝ Արիստակես Լաստիվերցի. Պատմություն, Երևան, 1971, էջ 32, 129, ծան. 93): Անվան ծագումը կապվում է «Սուրբ Մարիի կամ Մարինոսի, կամ էլ ս. Մարի եկեղեցու հետ» (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 726):*

[14] *Կիրակոս Գանձակեցի, էջ 257–259:*

«տան զաշխարին իւր ի ձեռս նորա՝ այլ ևս յաւելուածով»[15]: Կիրակոս Գանձակեցին նշել է, որ թաթար-մոնղոլները, «յայլ աշխարհս զայս ոչ առնէին, այլ ուր եւ հասանէին, ամենայն ուրեք նեղէին զնոսա»[16]:

Այսպիսով, մոնղոլները, հանդիպելով Հասան-Ջալալի գլխավորած դիմադրությանը, ճանաչեցին նրա իշխանությունը ոչ միայն Ներքին Խաչենում, այլև, փաստորեն, ամբողջ Արցախում («այլ ևս յաւելուածով»): Կիրակոս Գանձակեցին հենց այդ կարգավիճակով է նշել Հասան-Ջալալին հետագա իրադարձությունները նկարագրելիս. «Մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալան կոչէին զգուանօք, այր աստուածապաշտ և երկիւղած, և պարկեշտ հայ ազգաւ»[17]:

Հասան-Ջալալը, օգտվելով ընձեռված հնարավորությունից, «խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհ իւր...»: Այդ նույն ժամանակաշրջանում (1216–1238 թթ.) նա ավարտեց Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կառուցումը Գանձասարում[18]: Գարեգին Հովսեփյանցը, մեծ գովեստով արտահայտվելով հայ եկեղեցական ճարտարապետության մասին, գրել է. «Քիչ չեն եւ փառաւոր տաճարներ, որոնք հայ նախնի ճարտարապետութեան ոգին ու աւանդութիւնները պահելու հետ, ունին եւ ԺԳ. դարու վերածնութեան յատուկ գծեր եւ զարդարանքի ոճեր: Յովհաննավանքը Վաչուտեանց իշխանութեան մէջ, Գանձասարը՝ Խաչէնի, Ամարաս կամ Նորավանքը՝ Օրբէլեանների, Դսեղի Բարձրաքաշը՝ Մամիկոնեանների, Գեղարդը (Ս. Աստուածածին)՝ Խաղբակեանների, նոյնը կարող ենք ասել բոլոր մեծ ու փոքր իշխանութիւնների համար, կենդանի եւ խօսուն վկաներ են մի աննման, եռանդուն շինարարութեան, որի նմանը քիչ է կրկնւում պատմութեան մէջ»[19]:

Վարելով ճկուն քաղաքականություն՝ Հասան-Ջալալը կարողացել էր ոչ միայն ամրապնդել իր իշխանությունն Արցախում, այլև քաղաքական բարդություններով լի այդ ժամանակաշրջանում զբաղվել համահայկական ազգանվեր գործերով: Ս. Բարխուդարյանը նշել է, որ Հասան-Ջալալը XIII դարում հայ իշխաններից ամենազորեղ ու հեղինակավորներից մեկն էր, որն աղբյուրների մեջ մեծարվում է «ինքնակալ իշխանաց իշխան տէր Խաչէնու», «իշխան Խաչէնոյ եւ Ռանայ», «մեծ արքայ», «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր…», «բարեպաշտ արքայն Ջալալին», «Արքայ Ջալալ Դուլայ», «թագաւոր Ջալալայ Դուլա...»[20]:

Մոնղոլների հետ կայացած պայմանավորվածության կետերից էր՝ «ամի ամի երթալ

---

[15] *Նույն տեղում:*

[16] *Նույն տեղում, էջ 267–269:*

[17] *Նույն տեղում, էջ 358:*

[18] *Նույն տեղում, էջ 269–270:*

[19] *Գարեգին կաթողիկոս Յովսէփեան. Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 12:*

[20] *Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ: Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 15:*

զկնի նոցա ի գործ պատերազմի...»[21]*: Սակայն, հենց ըստ Կիրակոս Գանձակեցու, հայկական ջոկատները մոնղոլ բանակի կազմում մասնակցել են միայն Իկոնիայի թյուրք--սելջուկների դեմ մղված պատերազմում:*

1243 թ. մոնղոլների և Իկոնիայի սուլթանության միջև ճակատամարտ է տեղի ունենում Չմանկատուկ քաղաքագյուղի մոտ, որը Երիզայից (Երզնկա) 15–20 կմ դեպի արևելք էր[22]*, ուր Ղիաս ադ-Դին Քայ Խոսրով (Ղիաթադին) սուլթանի զորքերը ջախջախվում են*[23]*: Պատմագրության մեջ նշված է, որ պարսկալեզու հեղինակներ Ռաշիդ-էդ-Դինը*[24] *և Իբն-Բիբին, մոնղոլական և Իկոնիայի սուլթանի զորքերի հանդիպման վայրն անվանում են «Քյոսե-դաղ» ձևով*[25]*: Որոշ հեղինակներ այդ անվանումը Չմանկատուկի փոխարեն են օգտագործում*[26] *կամ դրան զուգահեռ*[27]*:*

---

[21] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 269:*

[22] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, Գ, Երևան, 1977, էջ 227: Հ. Քյուրտյանը Չմանկատուկի տեղադրության մասին խոսելիս, նշելով Հեթում պատմիչի (XIII–XIV դդ.) հիշատակած Կոնսեդրաք անվանաձևը (Հ ե թ ո ւ մ պ ա տ մ ի չ. Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 39), Չմանկատուկ անվան աղավաղում է համարել «Քօսա տաղ»-ը (Յ. Ք ի ւ ր տ ե ա ն. Երիզա եւ Եկեղեաց գաւառ: Պատմական համագրութիւն, հ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1953, էջ 109):*

[23] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 281–282:*

[24] *Ռուբրուկի ուղեգրությունում նշված է այս ճակատամարտի մասին, սակայն առանց տեղանվան հիշատակության, իսկ հայերեն թարգմանության ծանոթագրություններում Հ. Հակոբյանը, առանց հիշատակելու Կիրակոս Գանձակեցու հաղորդումը, գրել է. «Ռաշիդ-էդ-Դինը այս նշանավոր ճակատամարտի վայրն անվանում է Քյոսե-Դաղ» (Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 28, ծան. 6): XIV դ. պարսկալեզու պատմագրության ներկայացուցիչ Ռաշիդ-էդ-Դինի (տե՛ս Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն. Ռաշիդ-էդ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին. - ՊԲՀ, 1978, - 2, էջ 129–139) աշխատությունը սկզբնական աղբյուր չէ և ի թիվս հայկական այլ սկզբնաղբյուրների, ինչպես նշել է Լ. Բաբայանը, նա օգտագործել է նաև Կիրակոս Գանձակեցու երկը (Լ. Բ ա բ ա յ ա ն. Ռաշիդ-էդ-Դինի «Տարեգրությունների ժողովածուն» և նրա հայկական աղբյուրները.– ՊԲՀ, 1965, -2, էջ 81–94), այնպես որ առաջնային է Չմանկատուկ տեղանունը:*

[25] *Մասնավորապես, Ռաշիդ-էդ-Դինի աշխատության ռուսերեն թարգմանությունում այդ ճակատամարտի վայրի անվանումը նշված է* «Косе-даг» *ձևով, իսկ ժամանակը՝ 1256 և 1257 թթ. տեղի ունեցած իրադարձությունների միջև* (Р а ш и д - а д - Д и н. Сборник летописей, т. III, пер. с перс. А. К. Арендса. М.—Л., 1946, с. 33), *այնինչ այդ իրադարձությունների մասին անմիջական սկզբնաղբյուրը Կիրակոս Գանձակեցու երկն է, որտեղ Չմանկատուկի ճակատամարտի և համաժամանակյա իրադարձությունների ժամանակաշրջանի մասին նշված է. «...ի ՈՂԲ թուականիս Հայոց» (1243 թ.) (Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 284): Հեթում պատմիչն այս կապակցությամբ նշել է 1244 թ. (Հ ե թ ո ւ մ պ ա տ մ ի չ. նշվ. աշխ., էջ 39):*

[26] Г. Г. М и к а е л я н. *Նշվ. աշխ., էջ 297,* I s t v á n V á s á r y. Cumans and Tatars: Oriental Military in the Pre-Ottoman Balkans, 1185–1365, New York, 2005, p. 73; *Կ. Մ ո ւ թ ա ֆ յ ա ն. Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 416, Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 303, Ս. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. Մոնղոլական տիրապետությունը*

Անհրաժեշտ է նկատել, որ Չմանկատուկ տեղանվան հիմքում ընկած է VI դ. բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու Բարձր Հայքում՝ հիշատակած Բիզանա (Վժան՝ Երիզա՝ Երզնկայից ոչ հեռու) քաղաքից 3 մղոն հեռավորության վրա գտնվող (Յումինա վայրի[28] անվանումը: Ըստ Ն. Ադոնցի, Յումինա անվանմանը համապատասխանում է Ճիմին ձևը, որը հիշատակել է Ղ. Ինճիճյանը[29]: Ըստ Պրոկոպիոս Կեսարացու, Հուստինիանոսը Յումին (արևմտահայերեն ձևն է՝ Ջիմին) կոչվող վայրում կառուցել էր Հուստինիանուպոլիսը[30]: Պարզ է, որ Չմանկատուկի փոխարեն օտար՝ «Քյոսա-դաղ» անվանաձևի օգտագործումն Բարձր Հայքի լեռանունների և տեղանունների ցանկում անհարիր է հայկական պատմաաշխարհագրական տերմինաբանության համար:

Սելջուկյան սուլթանության դեմ պատերազմում մասնակցած հայկական ուժերը, ըստ Կիրակոս Գանձակեցու, գլխավորում էին մեծամեծ Զաքարյան իշխանները՝ Ավագը և Շահնշահը, Վահրամն ու նրա որդին, խաչենցիներ Զալալ Հասանը ու նրա ազգականները՝ մորաքրոջ Դոփի որդի Գրիգորը և այլ հայ իշխաններ, որոնք «զբազում ազատեցին ի գերելոցն, որ յայտնի և որ ի ծածուկ, զքահանայս և զկրօնաւորս»[31]: Դոփի որդուն՝ Խաչենցի Գրիգորին, պատմիչը հիշատակել է ի թիվս այլ հայ իշխանների նաև Կարին-Թեոդոսուպոլիսից գերեվարվածների ազատագրման կապակցությամբ[32]:

Չմանկատուկի ճակատամարտում Իկոնիայի սուլթանության պարտությունից հետո, մոնղոլները, գրավելով Կապադովկիայի Կեսարիան, ինչպես նաև Բարձր Հայքի Երեզ (Երզնկա), Փոքր Հայքի Սեբաստիա, Տնրիկե քաղաքները, մոտեցան Կիլիկիայի հայկա-

---

Հայաստանում, բ. Հայաստանի արևմտյան և հարավային շրջանների գրավումը.– Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 279:

[27] *Ա. Հովհաննիսյան. Կիլիկիայի Հայկական թագավորության և Կարամանյան պետության հարաբերությունների պատմությունից (XIII դարի երկրորդ կես). – ՊԲՀ, - 1, 2014, էջ 124, 126: Ա. Բոզոյան. Կիլիկիայի Հա յկական թագավորությունը Հեթումյանների օրոք XIII դարում.– Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, էջ 362:*

[28] Τζουμινα (Procopius with an English translation by H. B. Dewing, in seven volumes, VII, Buildings, London, 1954, III.5.15, p. 204). *Այն համապատասխանում է հնում, խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված* URUTi-ma-na *տեղանվանը* [В. Н. Хачатрян. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, *էջ 86–87, 164, հմմտ.* URUTe/im(m)iya, *տե՛ս Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 97]՝ Հայասայի տարածքում:*

[29] *Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասն Առաջին, Ասիա, հ. Ա, Վէնէտիկ, 1806, էջ 101:*

[30] Proc. Aed. III.5.15. Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 145. *Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 197:*

[31] *Կիրակոս Գանձակեցի, էջ 283–284:*

[32] *Նույն տեղում, էջ 280: Հ. Օրբելին այն կարծիքին էր, որ նրանք էին միացել Հասան-Ջալալի գլխավորած ջոկատին* (И. А. Орбели. hАсан-Джалал, князь Хаченский, с. 421)*:*

կան պետության սահմաններին: Հեթում Ա-ը (1226–1270), տեսնելով Կիլիկիային սպառնացող մոնղոլների ներխուժման վտանգը, դեսպաններ առաքեց նրանց հրամանատար՝ Բաչու-նուինի և «այլ մեծամեծ աւագանւոյն» մոտ՝ «դնել նոցա ընդ նմա ուխտ խաղաղութեան»[33]:

Հատկանշական է, որ Կիլիկիայի Հայկական թագավորության համար այս ճակատագրական պահին մոնղոլների հետ բանակցությունները տեղի ունեցան «միջնորդութեամբ իշխանին Ջալալին»[34]: Այս հաղորդմանը պատշաճ ուշադրություն է դարձվել հայ պատմագրության մեջ (Հ. Մանանդյան, Գ. Միքայելյան, Ա. Գալստյան, Ս. Բոռնազյան, Բ. Ուլուբաբյան, Լ. Տեր-Պետրոսյան)[35]: Մասնավորապես, Հ. Մանանդյանը, խոսելով 1243 թ. Չմանկատուկի մոտ թուրք-սելջուկների կրած պարտության մասին, գրել է. «Իկոնիայի սելջուկյան սուլթանի պարտությունից... հետո մոնղոլական արշավանքների վտանգը սպառնում էր արդեն Կիլիկիայի հայկական պետությանը: Այդ վտանգը Հեթում թագավորը, առանց ժամանակ կորցնելու, աշխատեց կանխել: Նա ուղարկեց Բաչու-նուինի... մոտ դեսպաններ և... կնքեց նրանց հետ, Խաչենցի Հասան-Ջալալի միջնորդությամբ, հաշտության և բարեկամության դաշինք...»[36]:

Այսպիսով, Հեթում Ա-ի ու մոնղոլների միջև պայմանագրի կնքման հիմք դնելու հնարավորություն ստեղծվեց, որով Կիլիկիայի Հայկական թագավորությունը զերծ էր մնալու մոնղոլների ավերիչ ասպատակություններից: Իսկ մոնղոլները ցանկանում էին Կիլիկիայի աջակցությամբ Միջերկրականի արևելյան ավազանում իրենց նվաճումները կատարել: Մոնղոլների հետ նախնական պայմանավորվածությունից հետո՝ Սմբատ սպարապետի, այնուհետև Հեթում Ա-ի մոնղոլների մոտ մեկնելու, բանակցելու և պայմանագիր կնքելու հետ կապված իրադարձությունների մասին Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Ակներցու, Սմբատ Սպարապետի և Հեթում Պատմիչի հաղորդումները մանրամասն քննարկվել են հայ պատմագիտության մեջ:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ սկզբնական բանակցություններից միայն տասը տարի անց Հեթում թագավորը Կարակորում մեկնեց: Իկոնիայի սուլթանությունը, խիստ թուլանալով, բռնել էր վայրէջքի ճանապարհը[37], Չմանկատուկի պարտությունից հետո, այնուամենայնիվ, այն շարունակում էր ավազակային վտանգ ներկայացնել Կիլիկյան Հայաստանի համար: Ուստի, Հեթումը Բաթուի ուղարկած՝ Մանգու խանին տեսակցելու և բանակցելու հրավերի առիթը բաց

---

[33] *Կիրակոս Գանձակեցի, էջ 285:*

[34] *Նույն տեղում:*

[35] Г. Г. Микаелян. *նշվ. աշխ., էջ 298, Ա. Գալստյան. Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները.– ՊԲՀ, 1964, -1, էջ 99, ՀԺՊ, հ. III, էջ 700, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 194–195, 232, Լ. Տեր-Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 304: Տե՛ս նաև Է. Դանիելեան. նշվ. աշխ., էջ 129–131:*

[36] *Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 227:*

[37] *Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, էջ 366:*

չի թողնում: Հեթումը 1254 թ. Կարակորում մեկնելիս մեծ զգուշավորություն ցուցաբերեց Կիլիկիայից՝ Փոքր Հայքով Մեծ Հայք մտնելիս և հյուսիսարևմտյան շրջաններով անցնելիս: Ինչպես նշել է Կիրակոս Գանձակեցին, Հեթումը վտանգ զգալով Իկոնիայի սուլթանության «թուրքաց, որք սահմանակիցք նորա էին... փութով անցեալ...», մտնում է Մեծ Հայք և «եկն ի Կարս քաղաք»[38]: Հեթումը Կարսից գնում է Արագածոտնի Վարդենիս գյուղը: «Եւ իբրև գիտաց մեծ կաթողիկոսն Կոստանդին[39], եթէ գնաց նա խաղաղութեամբ և դադարեալ է ի Մեծն Հայք, առաքեաց զմեծ վարդապետն Յակոբ՝ զայր բանաւոր և իմաստուն…»: Այնուհետև Հեթում արքան անցնում է Կուրի ձախափնյակում գտնվող բուն Աղուանք և հասնում «ընդ դուռն Դարբանդայ»[40], այնտեղից էլ ուղևորվում է Կարակորում:

Հեթում արքան 1254 թ. Մանգու խանի հետ պայմանագիր կնքեց, որը նրան հրովարտակ տվեց, «զի մի ոք իշխեսցէ նեղել զնա եւ զաշխարհ նորա. ետ եւ զիր ազատութեան եկեղեցաց ընդ ամենայն տեղիս»[41]: Կիլիկյան Հայաստան այցելած Ռուբրուկը գրել է, որ Մանգու խանը Հեթումին արտոնություն էր շնորհել, որ ոչ մի «դեսպան» (այսինքն՝ մոնղոլ պաշտոնյա) չմտնի նրա երկիրը: Դրանից Գ. Միքայելյանը եզրակացրել է, որ «մոնղոլները ճանաչել էին ներքին կյանքում Կիլիկիայի Հայկական թագավորության անկախությունը որպես Հեթումի գերագույն իշխանության ինքնուրույնության ճանաչում»[42]:

Մեծ Հայքում և Վիրքում մոնղոլների սահմանած հսկայական հարկերի հետևանքով վիճակն ավելի էր ծանրացել, ու Արցախի իշխանը, ի թիվս մի շարք հայ իշխանների,

---

[38] *Կիրակոս Գանձակեցի, էջ 364:*

[39] *Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1221–1267):*

[40] *Կիրակոս Գանձակեցի, էջ 364–366: Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 1926–1927:*

[41] *Կիրակոս Գանձակեցի, էջ 367: Կ. Մութաֆյանը նշել է, որ Հեթումը այդ պայմանագիրը կնքելով «փրկում է Կիլիկիան ասպատակություններից և պաշտպանում մահմեդական աշխարհից» (Կ. Մութաֆյան. նշվ. աշխ., էջ 417):*

[42] Г. Г. Микаелян. *Նշվ. աշխ., էջ 316: Լ. Տեր-Պետրոսյանը, ելնելով այդ պայմանագրի մասին Կիրակոս Գանձակեցու և Գրիգոր Ակներցու (Գրիգոր վրդ. Ակներցի. Պատմութիւն թաթարաց, աշխ. Ն. Պողարեանի, Երուսաղեմ, 1974, էջ 37–38) հաղորդումներից, եզրակացրել է. «Մոնղոլների հետ դաշինքը Հեթում թագավորը կնքել էր Խաչենի իշխան Հասան-Ջալալի միջնորդությամբ, ինչը Կիլիկիո Հայոց թագավորության և Մեծ Հայքի հայ իշխանների համագործակցության ամենանշանակալի դրվագներից մեկը պետք է համարել… Կիլիկիո Հայոց թագավորությունն իր բախտը ակամա կապեց մոնղոլական տիեզերակալ կայսրության հետ՝ դրա շնորհիվ խուսափելով հարևան երկրներին բաժին հասած ծանր փորձություններից» (Լ. Տեր-Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 291–292, 304): Կիլիկյան Հայաստանի արևելյան քաղաքականությունում քոչվոր մոնղոլ-թաթարների հետ բանակցելը և պայմանագիր կնքելը բխում էր զուտ քաղաքական հանգամանքներից՝ հնարավորինս փրկել Կիլիկյան Հայաստանը մոնղոլների ասպատակություններից: Հատկանշական է, որ Հեթում I-ը, 1255 թ. Կիլիկիա վերադառնալիս Մեծ Հայքում գալիս է Սիսիան, ապա կանգ առնում Վարդենիս գյուղում և օգնություն ցուցաբերում իր մոտ եկած հայ իշխաններին ու հոգևորականներին (Կիրակոս Գանձակեցի, էջ 370–371):*

զբաղված էր թաթար-մոնղոլական զավթիչների դաժան ճնշումներին դիմակայելով: Իսկ մի քանի տարի անց՝ 1259–1261 թթ., ապստամբական շարժումը ճնշվեց, որի ղեկավարները դաժանորեն սպանվեցին: Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալի մահը նկարագրել է որպես սուրբ նահատակություն[43]*:*

Այսպիսով, թաթար-մոնղոլական ասպատակությունների սկզբնական ժամանակաշրջանում Ներքին Խաչենի իշխան Հասան-Ջալալ Դոլայի գլխավորած հզոր դիմակայությունը ստիպեց թշնամուն ճանաչել նրա ինքնուրույն իշխանությունը Մեծ Հայքի տասներորդ աշխարհում՝ Արցախում, ինչպես նաև բանակցությունների միջոցով քաղաքական հարաբերություններ հաստատել նրա հետ: Հայ նշանավոր քաղաքական և ռազմական գործիչ Հասան-Ջալալը կարողացավ պահպանել Արցախի նշանակությունը համահայկական գործերում՝ որոշակի ներդրում կատարելով Կիլիկիայի Հայկական թագավորության արևելյան քաղաքականության մեջ:

ЗНАЧЕНИЕ КНЯЖЕСТВА АРЦАХ-ХАЧЕНА В ВОСТОЧНОЙ ПОЛИТИКЕ АРМЯНСКОГО ЦАРСТВА КИЛИКИИ
(40-е годы XIII века)

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Резюме

Армянское царство Киликии (1198—1375), в процессе внутреннего развития и установления внешних связей, продолжало обогащать армянскую цивилизационную сокровищницу фундаментальными ценностями в сферах государственного строительства, культуры и международных отношений. С 40-х годов XIII века Армянское царство Киликии начало иметь дело с монголами. До этого князь Арцах-Хачена hАсан-Джалал Дола, Араншаhик-Вахтангской ветви древнего рода hАйкян-Сисакян, наряду с другими армянскими князьями, оказавшими сопротивление монгольским захватчикам, сумел защитить Арцах. После поражения, понесенного сельджукским Иконийским султанатом от монголов в битве при Чманкатуке (1243 г.), князь Арцах-Хачена внес вклад в восточную политику Армянского царства Киликии. При его посредничестве царь Хетум I в 1254 г. заключил договор с Мангуханом, что было обусловлено политическими обстоятельствами. Царь Хетум пытался обезопасить Киликийскую Армению от нашествий монголов, вторгшихся в Великую Армению.

[43] *Կիրակոս Գանձակեցի, էջ 391–392:*

Таким образом, мощное сопротивление во главе с князем Внутреннего Хачена hАсан-Джалалом против татаро-монгольского вторжения в 1236 г. заставило врага признать его власть в Арцахе, десятой провинции Великой Армении, а также установить с ним политические отношения. Известный армянский политический и военный деятель князь hАсан-Джалал Дола в этот период ценой своей жизни смог обеспечить значение Арцаха в общеармянских делах.

THE SIGNIFICANCE OF ARTSAKH-KHACHEN PRINCEDOM IN THE EASTERN POLICY OF THE ARMENIAN KINGDOM OF CILICIA
(The 40-s of the 13th century)

EDUARD DANIELYAN

S u m m a r y

The Armenian kingdom of Cilicia (1198–1375) continued to enrich the Armenian civilizational treasury with fundamental values in the spheres of state-building, culture and international affairs in the process of internal development and establishment of external relations. From the 40s of the 13th century the Armenian kingdom of Cilicia had dealt with the Mongols. Before that the Artsakh-Khachen Prince Hasan-Jalal Dola from the Aranshaik-Vakhtangian branch of the ancient Haikian-Sisakian family, along with some other Armenian princes opposing the Mongol invaders, was able to defend Artsakh. After defeat of the Seljuk Iconian sultanate by the Mongols in the battle of Chmankatuk (1243) the Prince of Artsakh-Khachen contributed to the eastern policy of the Armenian kingdom of Cilicia: King Hetum I in 1254 concluded by his mediation a treaty with Mangu Khan. It was determined by political circumstances: Hetum tried to secure Cilician Armenia from the Mongol conquerors who invaded Great Armenia.

Thus, the mighty resistance headed by the Artsakh-Khachen Prince Hasan-Jalal Dola against the Tatar-Mongols invasions in 1236 made the enemy recognize his power in Artsakh, the tenth province of Great Armenia, as well as to establish political relations with him. In that period the prominent Armenian political and military figure, Hasan-Jalal Dola at the cost of his life was able to secure Artsakh’s significance in all-Armenian affairs.